ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2025 թվականի N 666-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՊԵՏՐՈՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 163-րդ և 164–րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11–ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18–րդ կետը և Պետրոս Ավագյանի 2025 թվականի հունիսի 25–ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանին տրամադրել 2025 թվականի ամենամյա արձակուրդի մի մասը՝ 12 /տասներկու/ աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 1–ից մինչև հուլիսի 16-ը ներառյալ:
2. Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել Արաքս համայնքի ղեկավարի օգնական Աշոտ Հովհաննիսյանին:
3. Պետրոս Ավագյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հուլիսի 17–ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. հունիսի 26
Արաքս համայնք